ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/317

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Վերիտաս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18265-2021 գրությամբ «Վերիտաս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 02.11.2021թ.-ի թիվ ՊՆ/02/5842-2021 գրության հիման վրա, 09.11.2021թ.-ին «Վերիտաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 09.11.2021թ.-ին:

09.11.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/317 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

16.11.2021թ.-ին և 03.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.11.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.11.2021թ.-ի թիվ ՊՆ/02/5842-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊ9Բ-21-9/31» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ԻՄՊԵՔՍ» և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների ներկայացրած փվյալների իսկությունը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի հիման վրա ստուգելու նպատակով իրականացված հարցումների շրջանակներում ստացված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում նշված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերը նշված մասնակիցների ներկայացրած փվյալները որակել է իրականությանը չհամապատասխանող և հիմք ընդունելով նշված կարգի 67-րդ կետի պահանջները որոշել է մերժել վերջիններիս հայտերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վերիտաս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 09.11.2021թ.-ին գրությամբ դիմել է «Իմպեքս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18265-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Վերիտաս» ՍՊԸ-ն 11.11.2021թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուի կողմից 22.10.2021թ.-ին անցկացված գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգի երկրորդ կետը եղել է հետևյալը՝ «Մասնակիցների ներկայացրած տվյալների իսկությունը ստուգելու համար «Karl Storz», «Olympus» և «Shinva Medical Instrument Co., Ltd.» արտադրողների պաշտոնական ներկայացուցիչներին հարցում ուղարկելու մասին»:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշել է հարցում ուղարկել վերոնշյալ արտադրողների պաշտոնական ներկայացուցիչներին, մասնավորապես «Shinva Medical Instrument Co., Ltd.» արտադրողի մասով հարցում է ուղարկել միայն Իմպեքս ՍՊԸ-ին, մինչդեռ Վերիտաս ՍՊԸ-ն նույնպես հանդիսանում է «Shinva Medical Instrument Co., Ltd. » պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում և որևէ հարցում չի ստացել Պատվիրատուից:

27.10.2021թ.-ին կայացած գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 7 արձանագրության 1.2.2 կետով ընտրված մասնակից է ճանաչվել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, մինչդեռ Իմպեքս ՍՊԸ-ից հետո հաջորդ տեղ զբաղեցնող մասնակիցը Վերիտաս ՍՊԸ-ն էր, որի հայտը գնահատող հանձնաժողովը անհիմն որոշել է մերժել:

Մասնակիցների ներկայացրած փվյալների իսկությունը ստուգելու համար գնահատող հանձնաժողովը որոշել է հարցում ուղարկել «Karl Storz», «Olympus» և «Shinva Medical Instrument Co., Ltd. » արտադրողների պաշտոնական ներկայացուցիչներին, ընդ որում «Shinva Medical Instrument Co., Ltd. » ընկերության մասով պատվիրատուն կամայականորեն որոշել է հարցում ուղարկել միայն Իմպեքս ՍՊԸ-ին, մինչդեռ ակնհայտ էր, որ Վերիտաս ՍՊԸ-ն նույնպես առաջարկել է «Shinva Medical Instrument Co., Ltd. » ընկերության արտադրանքը, հետևաբար պետք էր ուղարկել հարցում նաև Վերիտաս ՍՊԸ-ին:

Պատվիրատուն իր որոշումը հիմնավորել է այն հանգամանքով, որ Իմպեքս ՍՊԸ ներկայացուցիչները 22.10.2021թ. կայացած նիստին հայտնել են, որ Իմպեքս ՍՊԸ-ն հանդիսանում է «Shinva Medical Instrument Co., Ltd.» ընկերության պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում, մինչդեռ պատվիրատուն որևէ քայլ չի ձեռնարկել պարզելու համար, արդյոք Իմպեքս ՍՊԸ-ն հանդիսանում է «Shinva Medical Instrument Co., Ltd.» ընկերության միակ պաշտոնական ներկայացուցիչը, թե առկա են այլ ընկերություններ ևս: Թիվ 6 և 7 արձանագրություններում որևէ տեղ գրված չէ, որ Իմպեքս ՍՊԸ-ն հանդիսանում է «Shinva Medical Instrument Co., Ltd.» ընկերության բացառիկ ներկայացուցիչ ՀՀ-ում: Բացի այդ հարց է ծագում, թե ինչի հիման վրա է գնահատող հանձնաժողովը որակել Վերիտաս ՍՊԸ ներկայացրած տեղեկությունները իսկությանը չհամապատասխանող, կոնկրետ որ փաստաթղթի հիման վրա: Եթե հիմքը եղել է այն, որ Իմպեքս ՍՊԸ-ն ներկայացրել է գնահատող հանձնաժողովի կարծիքով ոչ պաշտոնական կամ ոչ պատշաճ կազմված գրություն արտադրողից, ապա ինչու գնահատող հանձնաժողովը չի կատարել նույն հարցումը Վերիտաս ՍՊԸ-ին: Միգուցե Վերիտաս ՍՊԸ-ն կարողանար ներկայացնել գնահատող հանձնաժողովի պահանջած պատշաճ կազմված և պաշտոնական գրությունը: Ինչու գնահատող հանձնաժողովը չի կատարել իր օրակարգով նախատեսված կետը և չի ուղարկել հարցում նաև Վերիտաս ՍՊԸ-ին:

Եթե գնահատող հանձնաժողովը նաև Վերիտաս ՍՊԸ-ից կատարեր հարցում և չստանար պատասխան, ապա տրամաբանական և իրավաչափ կլինեին նախաձեռնված ընթացակարգի պահանջները, սակայն փաստացի մեզ պահանջում են ներառել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող ընկերությունների ցանկում բացարձակ անհիմն, քանի որ ինչպես նշեցինք պատվիրատուն որևէ հարցում չի ուղարկել Վերիտաս ՍՊԸ-ին որպես «Shinva Medical Instrument Co., Ltd.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ-ում և չի ստացել Վերիտաս ՍՊԸ-ից տեղեկություններ: Հետևաբար եթե գնահատող հանձնաժողովը չի

ստացել տեղեկություններ Վերիտաս ՍՊԸ-ից, ապա այդ որ տեղեկություններն է համարել իսկությանը չհամապատասխանող:

Փաստացի գնահատող հանձնաժողովը չէր կարող չնկատել, որ Վերիտաս ՍՊԸ-ն նույնպես ներկայացրել է «Shinva Medical Instrument Co., Ltd.» ընկերության արտադրանքը, հետևաբար տրամաբանորեն պետք է որևէ կապ ունենար «Shinva Medical Instrument Co., Ltd.» ընկերության հետ, այսինքն ողջամտորեն կարել էր ենթադրել, որ Վերիտաս ՍՊԸ-ն նույնպես կարող է հանդիսանալ «Shinva Medical Instrument Co., Ltd.» ընկերության պաշտոնական ներկայացուցիչ, սակայն գնահատող հանձնաժողովի կամայական որոշման հետևանքով զրկվել է մրցույթին իր հետագա մասնակցության հնարավորությունից:

Հարկ է նշել, որ 21.10.2021թ.-ին պատվիրատուն ուղարկել է ծանուցում Վերիտաս ՍՊԸ-ին, տեղեկացնելով այն մասին, որ «Բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում նիստը տեղի է ունենալու 22.10.2021թ. ժամը 16:00-ին ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5)»: Նշված նիստին Վերիտաս ՍՊԸ-ն չի մասնակցել, ինչը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ այն բանի համար, որ պատվիրատուն գրավոր հարցում ուղարկեր Վերիտաս ՍՊԸ-ին այնպես, ինչպես ուղարկել է Իմպեքս և Ինտերմեդ Գրուպ ընկերությունների պարագայում, այսինքն հենց այդ նիստում գնահատող հանձնաժողովը որոշել է հարցումներ ուղարկել բոլոր մասնակիցներին՝ բացառությամբ Վերիտաս ՍՊԸ-ի: Նշված որոշումը պատվիրատուն կայացրել է կամայականորեն, այն չունի որևէ տրամաբանական հիմնավորում:

Ցանկացած դեպքում պատվիրատուն պարտավոր էր նաև Վերիտաս ՍՊԸ-ին ուղարկել հարցում, ինչը հրավիրված նիստի օրակարգի կետերից մեկն էր (թիվ 6 արձանագրության կետ 2), որը հանձնաժողովը չի կատարել, հավանաբար անհիմն ենթադրելով որ Իմպեքս ՍՊԸ-ն է «Shinva Medical Instrument Co., Ltd.» ընկերության միակ ներկայացուցիչը: Այստեղ առանցքային բառը «միակ»-ն է, այսինքն որևէ նամակում, որևէ փաստաթղթում գրված չէ, որ Իմպեքս ՍՊԸ-ն է միակ ներկայացուցիչը, այլ պատվիրատուի կողմից հրապարակված փաստաթղթերում գրված է, որ Իմպեքս ՍՊԸ-ն հանդիսանում է է «Shinva Medical Instrument Co., Ltd.» ընկերության ներկայացուցիչը: Իսկ թե ինչու է պատվիրատուն կարծել, որ միայն Իմպեքս ՍՊԸ-ն է հանդիսանում «Shinva Medical Instrument Co., Ltd.» ներկայացուցիչը, դեռ անհայտ է:

Տեղեկացնում ենք, որ Վերիտաս ՍՊԸ-ն ևս հանդիսանում է «Shinva Medical Instrument Co., Ltd.» ընկերության պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում, որի վերաբերյալ

անհրաժեշտ փաստաթղթերը կներկայացնենք ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պահանջով:

Գնահատող հանձնաժողովի 27.10.2021թ.-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրության 1.2.2 կետով ընտրված մասնակից է ճանաչվել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, մինչդեռ Իմպեքս ՍՊԸ-ից հետո հաջորդ տեղ զբաղեցնող մասնակիցը Վերիտաս ՍՊԸ-ն էր, որի հայտը գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել, այսինքն գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ պետք է ներկայացներ հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ Վերիտաս ՍՊԸ-ին՝ ինչի չի կատարել, այլ դրա փոխարեն անհիմն մերժել է Վերիտաս ՍՊԸ հայտը ևս: Եթե գնահատող հանձնաժողովը գործեր իրավաչափ, ապա կպահանջեր փաստաթղթեր նաև Վերիտաս ՍՊԸ-ից, հետո նոր դրանք կգնահատեր իսկությանը չհամապատասխանող, այլ ոչ թե առանց Վերիտաս ՍՊԸ-ին հարցում անելու կուղարկեր գրություն ֆինանսների նախարարություն՝ առաջարկելով նախաձեռնել այս ընթացակարգը:

Խնդրում ենք Ձեզ մերժել նախաձեռնված ընթացակարգը և Վերիտաս ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ մեր ընկերությունը որևէ ստանձնած պարտավորություն չի խախտել: Մեր ընկերությունը իսկությանը չհամապատասխանող տեղեկություններ, տվյալներ չի ներկայացրել պատվիրատուին:»:

Ի լրումն վերոնշյալ գրության, Մասնակիցը 02.12.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 11 նոյեմբերի 2021թ.-ին Վերիտաս ՍՊԸ կողմից Ձեզ ուղարկված կարծիքի, հայտնում եմ, որ 25.11.2021թ.-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը կայացրել է ԳԲՔԱ-ՆԳ-2021/84 որոշումը, որով պարտավորեցրել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 27.10.2021թ. հրավիրված նիստի թիվ 7 արձանագրության 1.2.1 կետով կայացրած որոշումը:

Հարկ է նշել, որ 1.2.1 կետը հենց այն կետն է, որով գնահատող հանձնաժողովը որակել է Վերիտաս ՍՊԸ տրամադրած տեղեկությունները իսկությանը չհամապատասխանող և դրա հետևանքով էլ մերժել էր Վերիտաս ՍՊԸ հայտը և նախաձեռնվել էր Վերիտաս ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող ընկերությունների ցանկում ներառելու գործընթաց: Այսպիսով, բացակայում են այն

հիմքերը, որով նախաձեռնվել է այս ընթացակարգը, քանի որ չեղյալ է համարվել գնահատող հանձնաժողովի այն որոշումը, որով Վերիտաս ՍՊԸ տրամադրած տեղեկությունները որակվել էին իսկությանը չհամապատասխանող և մերժվել էր Վերիտաս ՍՊԸ հայտը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/317 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 1 հատ քանակով «Մանրէազերծող սարք» ապրանքատեսակը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 33191100/2:

iii. Հավելված 1-ով 2-րդ չափաբաժնի մասով սահմանվել է, որ «մանրէազերծման սարքը» պետք է ունենա պաշտոնական համատեղելիություն՝ Karl Storz, Olympus, արտադրողների սարքերի և գործիքների հետ. Մասնավորապես՝ համատեղելիության վերաբերյալ պետք է նշում լինի Karl Storz և Olimpus մակնիշի սարքերի (գործիքների) կամ մանրէազերծող սարքի օգտագործման ձեռնարկներում (մեթոդական ցուցումներում) կամ համատեղելիությունը պետք է հավաստի մանրէազերծող սարքն արտադրողը կամ նրա պաշտոնական ներկայացուցիչը՝ իր կողմից տրված երաշխիքային նամակով:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, «Իմպեքս» ՍՊԸ-ն և «Վերիտաս» ՍՊԸ-ն:

v. «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվել է «Shiva Medical Instrument Co.» ընկերության SHINVA ապրանքային նշանի PS-100GXP մակնիշի ապրանքատեսակը:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.09.2021թ.-ի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ 10.09.2021թ.-ին հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել՝ «Իմպեքս» ՍՊԸ-ին:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները, հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Ինչպես նաև գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

viii. «Karl Storz» և «Olympus» արտադրողների կողմից տրված գրություններին համաձայն՝ «Shinva Medical Co.» ընկերության PS-100GXP մակնիշի SHINVA ապրանքային նշանով ապրանքը չունի պաշտոնական համատեղելիություն «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ:

ix. «Shinva Medical Co.» արտադրող ընկերության կողմից տրված գրության համաձայն՝ «Shinva Medical Co.» ընկերության ապրանքը համատեղելի է «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ:

x. Ընթացակարգի շրջանակներում «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ. ներկայացվել է բողոք, որով վերջինս խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021 թվականին հայտարարված թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. դադարեցնել 06.09.2021 թվականի ժամը 14:30 տեղի ունեցած նիստի N 4 արձանագրությամբ կայացված 2-րդ չափաբաժնի մասով «Իմպեքս» ՍՊ և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերը բավարար գնահատելու մասին որոշումը, «Իմպեքս» ՍՊ ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

10.09.2021 թվականին կայացված և հրապարակված 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը, և/կամ

2. ընդունել «Իմպեքս» ՍՊ և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերը 2-րդ չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում, և/կամ

3. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊ ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

xi. Բողոքներ քննող անձի կողմից 15.10.2021թ. կայացվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/83 որոշումը, որի համաձայն՝

1. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/83 ծածկագրով բողոքը բավարարվել է մասնակիորեն:

2. Պարտավորեցվել է ՀՀ պաշտպանության նախարարության բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարված թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 06.09.2021թ.-ի ժամը 14:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված 2-րդ չափաբաժնի մասով «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի հայտերը բավարար գնահատելու, «Իմպեքս» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու, 10.09.2021թ.-ին կայացված և հրապարակված 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները, իսկ մնացած մասով բողոքը մերժվել է:

xii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2021թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քննարկելով «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/83 ծածկագրով բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 15.10.2021թ. կայացրած որոշումը՝ որոշում է կայացրել 06.09.2021թ. ժամը 14:30 տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված 2-րդ չափաբաժնի մասով «Իմպեքս» և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերը բավարար գնահատելու, «Իմպեքս» ՍՊԸ-ի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և 10.09.2021թ. կայացված պայմանագիր կնքելու մասին որոշումները դադարեցնելու վերաբերյալ:

xiii. Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի համաձայն, հայտ ներկայացրած մասնակիցների՝ «Իմպեքս» ՍՊ, «Վերիտաս» ՍՊ և

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊ ընկերությունների հայտերով առաջարկվող ապրանքների և «Karl Storz» ու «Olympus» արտադրողների սարքերի ու գործիքների հետ պաշտոնական համատեղելիության հանգամանքի իսկությունը ստուգելու համար «Karl Storz», «Olympus» և «Shinva Medical Instrument Co LTD» արտադրողների պաշտոնական ներկայացուցիչներին հարցում ուղարկելու վերաբերյալ:

xiv. Նույն կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Իմպեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչները 22.10.2021թ. կայացած նիստին բանավոր հայտնել են, որ «Իմպեքս» ՍՊԸ-ն հանդիսանում է «Shinva Medical Instrument Co LTD» ընկերության պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում, ուստի՝ «Shinva Medical Instrument Co LTD» ընկերության մասով հարցումն ուղարկվել է «Իմպեքս» ՍՊԸ-ին՝ միաժամանակ խնդրելով տրամադել «Իմպեքս» ՍՊԸ-ի «Shinva Medical Instrument Co LTD» ընկերության պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում հանդիսանալու վերաբերյալ հավաստող փաստաթղթերը:

xv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2021թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 22.10.2021թ. գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված հարցումներին ի պատասխան «Karl Storz», «Olympus» և «Shinva Medical Instrument Co LTD» արտադրողների պաշտոնական ներկայացուցիչների կողմից ստացվել են գրություններ, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

«1. Համաձայն «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից անգլերեն լեզվով ներկայացրած նամակի՝ ընկերությունը լիազորված է Shinva Medical Instrument Co ընկերության կողմից ներկայացնել նրա արտադրանքը հայաստանյան շուկայում, վաճառել և իրականացնել սարքերի տեխնիկական սպասարկում: Ներկայացրած նամակը ըստ էության չի հաստատում «Իմպեքս» ՍՊ ընկերության պաշտոնական ներկայացուցչի կարգավիճակը, քանի որ պաշտոնական և/կամ առևտրային ներկայացուցիչ ճանաչվելու համար երկու կազմակերպությունների կողմից կնքվում է համապատասխան պայմանագիր՝ համաձայն որի լիազորվող կազմակերպությունը կարող է ամբողջովին կամ մասնակի ներկայացնել արտադրող կազմակերպության շահերը, որը «Իմպեքս» ՍՊ ընկերության կողմից գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել:

2. Համաձայն «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած երաշխիքային նամակի՝ ընկերության կողմի առաջարկվող մանրէազերծող սարքը «համատեղելի է «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ», որը հավաստում է նաև PS-

100GXP մակնիշի սարք արտադրող ընկերության կողմից ստացված անգլերեն լեզվով էլեկտրոնային գրությունը: Սակայն, ստացված նամակները չեն համապատասխանում հանձնաժողովի պահանջներին, քանի որ պահանջվել էր ներկայացնել «պաշտոնական համատեղելիության» վերաբերյալ տեղեկատվությունը:

3. (...) Հիմք ընդունելով հիշյալ հարցումների պատասխանները և հաշվի առնելով հրավերի տեխնիկական բնութագրի պահանջը՝ «Մանրէազերծման սարքը պետք է ունենա պաշտոնական համատեղելիություն՝ «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ» գտնում ենք, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի համաձայն՝ ստուգելով մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը հանձնաժողովը պետք է մերժի «Իմպեքս» ՍՊԸ-ի և նույն ապրանքը առաջարկող՝ հաջորդ տեղը զբաղեցրած «Վերիտաս» ՍՊ ընկերության հայտը»:

xvi. Նույն արձանագրության 1.2.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Իմպեքս» և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերով ներկայացված տվյալները իսկությանը չհամապատասխանող որակելու և վերջիններիս հայտերը մերժելու վերաբերյալ:

xvii. Նույն արձանագրության 1.2.2 և 1.2.5 կետերի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից հայտարարելու և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

xviii. Ընթացակարգի շրջանակներում «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 01.11.2021թ.-ին և «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից 02.11.2021թ.-ին ներկայացվել են բողոքներ:

xix. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.11.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/84 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 01.11.2021թ.-ին ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից 02.11.2021թ.-ին ներկայացված համանման բողոքը, «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, որոշել է՝

1. «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 01.11.2021թ. ներկայացված բողոքը բավարարել:
2. «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից 02.11.2021թ. ներկայացված համանման բողոքը բավարարել մասնակի:

3. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 27.10.2021թ. հրավիրված նիստի թիվ 7 արձանագրության 1.2.1 և 1.2.2 կետերով կայացրած որոշումները, ինչպես նաև նույն արձանագրությամբ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու վերաբերյալ կայացրած որոշումը:

4. «Իմպեքս» ՍՊԸ-ի բողոքի պահանջը՝ վերջինիս հաղթող ճանաչելու մասին որոշում ընդունելու վերաբերյալ, մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18265-2021 գրությամբ «Իմպեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված

լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն

կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հավելված 6-ով՝

պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 2-րդ չափաբաժնի մասով սահմանվել է, որ մանրէազերծման սարքը պետք է ունենա պաշտոնական համատեղելիություն՝ Karl Storz, Olympus, արտադրողների սարքերի և գործիքների հետ. Մասնավորապես՝ համատեղելիության վերաբերյալ պետք է նշում լինի Karl Storz և Olimpus մակնիշի սարքերի (գործիքների) կամ մանրէազերծող սարքի օգտագործման ձեռնարկներում (մեթոդական ցուցումներում) կամ համատեղելիությունը պետք է հավաստի մանրէազերծող սարքն արտադրողը կամ նրա պաշտոնական ներկայացուցիչը՝ իր կողմից տրված երաշխիքային նամակով: Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվել է «Shiva Medical Instrument Co.» ընկերության SHINVA ապրանքային նշանի PS-100GXP մակնիշի ապրանքատեսակը: Հանձնաժողովի 06.09.2021թ.-ի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ 10.09.2021թ.-ին հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել՝ «Իմպեքս» ՍՊԸ-ին: Այնուհետև Հանձնաժողովը որոշել է հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները, հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Ինչպես նաև գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

«Karl Storz» և «Olympus» արտադրողների կողմից տրված գրություններին համաձայն՝ «Shinva Medical Co.» ընկերության PS-100GXP մակնիշի SHINVA ապրանքային նշանով ապրանքը չունի պաշտոնական համատեղելիություն «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ: «Shinva Medical Co.» արտադրող ընկերության կողմից տրված գրության համաձայն՝ «Shinva Medical Co.» ընկերության

ապրանքը համատեղելի է «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ:

Ընթացակարգի շրջանակներում «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ. ներկայացվել է բողոք: Բողոքներ քննող անձի կողմից 15.10.2021թ. կայացվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/83 որոշումը, որի համաձայն՝

1. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/83 ծածկագրով բողոքը բավարարվել է մասնակիորեն:

2. Պարտավորեցվել է ՀՀ պաշտպանության նախարարության բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարված թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 06.09.2021թ.-ի ժամը 14:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված 2-րդ չափաբաժնի մասով «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի հայտերը բավարար գնահատելու, «Իմպեքս» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու, 10.09.2021թ.-ին կայացված և հրապարակված 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները, իսկ մնացած մասով բողոքը մերժվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2021թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քննարկելով «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/83 ծածկագրով բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 15.10.2021թ. կայացրած որոշումը՝ որոշում է կայացրել 06.09.2021թ. ժամը 14:30 տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված 2-րդ չափաբաժնի մասով «Իմպեքս» և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերը բավարար գնահատելու, «Իմպեքս» ՍՊԸ-ի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և 10.09.2021թ. կայացված պայմանագիր կնքելու մասին որոշումները դադարեցնելու վերաբերյալ, ինչով պայմանավորված որոշում է կայացվել, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի համաձայն, հայտ ներկայացրած մասնակիցների՝ «Իմպեքս» ՍՊ, «Վերիտաս» ՍՊ և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊ ընկերությունների հայտերով առաջարկվող ապրանքների և «Karl Storz» ու «Olympus» արտադրողների սարքերի ու գործիքների հետ պաշտոնական համատեղելիության հանգամանքի իսկությունը ստուգելու համար «Karl Storz», «Olympus» և «Shinva Medical Instrument Co LTD» արտադրողների

պաշտոնական ներկայացուցիչներին հարցում ուղարկելու վերաբերյալ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Իմպեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչները 22.10.2021թ. կայացած նիստին բանավոր հայտնել են, որ «Իմպեքս» ՍՊԸ-ն հանդիսանում է «Shinva Medical Instrument Co LTD» ընկերության պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում, ուստի՝ «Shinva Medical Instrument Co LTD» ընկերության մասով հարցումն ուղարկվել է «Իմպեքս» ՍՊԸ-ին՝ միաժամանակ խնդրելով տրամադել «Իմպեքս» ՍՊԸ-ի «Shinva Medical Instrument Co LTD» ընկերության պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում հանդիսանալու վերաբերյալ հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2021թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ 22.10.2021թ. գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված հարցումներին ի պատասխան «Karl Storz», «Olympus» և «Shinva Medical Instrument Co LTD» արտադրողների պաշտոնական ներկայացուցիչների կողմից ստացվել են գրություններ, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

«1. Համաձայն «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից անգլերեն լեզվով ներկայացրած նամակի՝ ընկերությունը լիազորված է Shinva Medical Instrument Co ընկերության կողմից ներկայացնել նրա արտադրանքը հայաստանյան շուկայում, վաճառել և իրականացնել սարքերի տեխնիկական սպասարկում: Ներկայացրած նամակը ըստ էության չի հաստատում «Իմպեքս» ՍՊ ընկերության պաշտոնական ներկայացուցչի կարգավիճակը, քանի որ պաշտոնական և/կամ առևտրային ներկայացուցիչ ճանաչվելու համար երկու կազմակերպությունների կողմից կնքվում է համապատասխան պայմանագիր՝ համաձայն որի լիազորվող կազմակերպությունը կարող է ամբողջովին կամ մասնակի ներկայացնել արտադրող կազմակերպության շահերը, որը «Իմպեքս» ՍՊ ընկերության կողմից գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել:

2. Համաձայն «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած երաշխիքային նամակի՝ ընկերության կողմի առաջարկվող մանրէազերծող սարքը «համատեղելի է «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ», որը հավաստում է նաև PS-100GXP մակնիշի սարք արտադրող ընկերության կողմից ստացված անգլերեն լեզվով էլեկտրոնային գրությունը: Սակայն, ստացված նամակները չեն համապատասխանում հանձնաժողովի պահանջներին, քանի որ պահանջվել էր ներկայացնել «պաշտոնական համատեղելիության» վերաբերյալ տեղեկատվությունը:

3. (...) Հիմք ընդունելով հիշյալ հարցումների պատասխանները և հաշվի առնելով հրավերի տեխնիկական բնութագրի պահանջը՝ «Մանրէազերծման սարքը պետք է ունենա

պաշտոնական համատեղելիություն՝ «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ» գտնում ենք, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի համաձայն՝ ստուգելով մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը հանձնաժողովը պետք է մերժի «Իմպեքս» ՍՊԸ-ի և նույն ապրանքը առաջարկող՝ հաջորդ տեղը զբաղեցրած «Վերիտաս» ՍՊ ընկերության հայտը: Նույն արձանագրության 1.2.1 կետով որոշում է կայացվել «Իմպեքս» և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերով ներկայացված տվյալները իսկությանը չհամապատասխանող որակելու և վերջիններիս հայտերը մերժելու վերաբերյալ, իսկ 1.2.2 և 1.2.5 կետերով որոշում է կայացվել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից հայտարարելու և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի շրջանակներում «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 01.11.2021թ.-ին և «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից 02.11.2021թ.-ին ներկայացվել են բողոքներ: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.11.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/84 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 01.11.2021թ.-ին ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից 02.11.2021թ.-ին ներկայացված համանման բողոքը, «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, որոշել է՝

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 01.11.2021թ. ներկայացված բողոքը բավարարել:

«Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից 02.11.2021թ. ներկայացված համանման բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 27.10.2021թ. հրավիրված նիստի թիվ 7 արձանագրության 1.2.1 և 1.2.2 կետերով կայացրած որոշումները, ինչպես նաև նույն արձանագրությամբ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու վերաբերյալ կայացրած որոշումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի

(պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.11.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/84 ծածկագրով կայացրած որոշմամբ հաստատված հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ վերոնշյալ որոշմամբ դադարեցվել է 27.10.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության 1.2.1 և 1.2.2 կետերով կայացրած որոշումները, ինչպես նաև նույն արձանագրությամբ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու վերաբերյալ կայացրած որոշումը, ինչով պայմանավորված վերանում է Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Ավելին՝ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ … գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ

հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.11.2021թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/84 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Հանձնաժողովի 27.10.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության 1.2.1 և 1.2.2 կետերով կայացրած որոշումները իրավաչափ չեն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Վերիտաս» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18265-2021 գրությամբ «Վերիտաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/317 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**